**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2026թ. ՆՄՈ/421-Ա

ք. Արմավիր

**«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գայանե Պարոնյանի 2026 թվականի հուլիսի 13-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Պարոնյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գայանե Պարոնյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ջիվան Այվազյանին:
3. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ջիվան Այվազյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գայանե Պարոնյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**